

Երկրաբանություն

Հ. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՅԹՆԵՐԸ**

Ինչպես բոլոր գիտությունների, այնպես էլ երկրաբանության զարգացման, առաջընթացի և ուսուցման բարելավման գործում կարևոր դեր է հատկացվում մայրենի լեզվով մասնագիտական տերմինաչինությամբ և տերմինաբանի ստեղծմանը: Այժմ այդ հարցն ավելի հրատապ է, քանի որ նախկինում ռուսաց լեզվով հրատարակվող երկրաբանական գրականությունը, ֆոնդային հաշվետվությունները, գործառնությունը վերջին տասնամյակում մեծամասամբ անցան հայերենին: Գոյություն ունեցող բառարանները չեն բավարարում աճող պահանջներին: Դրանք փոքրածավալ են, չեն ընդգրկում երկրաբանական մասնագիտական լիակատար բառապաշարը, հաճախ վերաբերում են երկրաբանության առանձին նեղ ճյուղերին և զուրկ չեն թերություններից ու անճշտություններից: Կարևոր է նշել, որ այդ բառարանները հիմնականում տերմինաբանական՝ թարգմանչական են: Մինչև այժմ գոյություն չունի երկրաբանության բոլոր բնագավառներն ընդգրկող բացատրական բառարան, ինչն անթույլատրելի է: Հաշվի առնելով քննարկվող հիմնահարցի կարևորությունը և արդիականությունը, ինչպես նաև երկրաբանական տերմինների իմաստային ու ռճաբանական ուսումնասիրման և հայերեն մասնագիտական բառարանագիտության հետագա զարգացման գիտական նշանակությունը, պատմական և ռեզիդուալ երկրաբանության ամբիոնում նախատեսվում է կազմել ու հրատարակել հայկական երկրաբանական եռալեզու տերմինարան (մոտ 50 մամուլ): Այն ընդգրկելու է մշակված, գիտականորեն հիմնավորված, ընդհանուր ճանաչում և լայն կիրառություն ունեցող, ինչպես նաև բազմաթիվ նորաստեղծ տերմիններ և դրանց բացատրությունները:

Հայկական երկրաբանական բառարանագրության պատմությունը բավական աղքատիկ է: Դրա առաջին փորձը 1900թ. Սիմեոն Երեմյանի կողմից Վենետիկում հրատարակված «Նոր հանքաբանություն նկարագրական և պատմական» աշխատությունն է [1]: Այն ընդգրկում է ժամանակի արևմտահայերենի երկրաբանական բառապաշարը, պարունակում է տերմինների մի շարք հաջող թարգմանություններ, բայց հետագայում առանձնակի ճանաչում և տարածում չի ստացել ռուսաց լեզվի գերիշխանության պայմաններում: 1957թ. հրատարակված առաջին ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը [2] ընդգրկում էր փոքրաքանակ երկրաբանական տերմիններ: Հավանա-

բար, դա կարելի է համարել մեզանում մայրենի լեզվով երկրաբանական տերմինաշինության առաջին և թույլ փորձը: Հետագայում, մինչև 80-ական թվականները, առանձնակի աշխատանքներ այս բնագավառում չեն կատարվել, չնայած որ խնդիրը անընդհատ դրվել ու քննարկվել է: Հայկական երկրաբանական բառարանագրության մեջ զգալի առաջընթաց սկսվեց 80-ական թվականների սկզբում: Դա պայմանավորված էր նրանով, որ մինչ այդ երկրաբանական գիտության աննախընթաց վերելքը և զրականության ու տեղեկատվության աստիճանական հայացումը պահանջում էին ավելի լուրջ զբաղվել հայերեն երկրաբանական տերմինների մշակման ու կարգավորման հարցերով, ստեղծել նոր տերմինաբանական ստանդարտներ, հրատարակել հայերեն դասագրքեր և ձեռնամուխ լինել տերմինաբանական բառարանի կազմմանը:

Հայկական երկրաբանական տերմինաբանության մշակման գործում զգալի ներդրում էր 1984թ. հեղինակներից մեկի կողմից երկրաբանական տերմինների ռուս-հայերեն անդրանիկ բառարանի հրատարակումը [3], որի շնորհիվ գործածության մեջ մտան հայերեն բազմաթիվ նոր տերմիններ: 1985թ. լույս տեսավ Խաչատրյանի «Լեռնատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարանը» [4], որն ընդգրկում է փոքրաթիվ երկրաբանական տերմիններ: Մայրենի լեզվով երկրաբանական տերմինաշինության գործում զգալի դեր խաղացին «Հայկական սովետական հանրագիտարանի» [5], «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» [6], «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի» [7], «Ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական ռուս-հայերեն բացատրական բառարանի» [8], «Հայաստանի ռեզիդնալ երկրատեխտոնիկայի» [9] հրատարակումները և հայոց լեզվով մի քանի ուսումնական ձեռնարկներ:

Չնայած այս ամենին, այժմ էլ հայերեն հրատարակված մենագրություններում, հոդվածներում, ֆոնդային հաշվետվություններում, մամուլում, դասագրքերում, բուհերում կարդացվող դասախոսություններում նկատվում է երկրաբանական տերմինների ոչ միասնական ու միօրինակ օգտագործում, հաճախ կամայական մոտեցում, օտար տերմինների անհարկի օգտագործում, այն դեպքում, երբ կան դրանց հայերեն համարժեքները: Երբեմն էլ թարգմանված տերմինը չի համապատասխանում երկրաբանական տվյալ հասկացության իմաստին:

Մասնագիտական բացատրական բառարան, այն էլ եռալեզվյա, կազմելու գործն աշխատատար է և ծանր: Պետք է կազմել բառացանկը, ստուգել բոլոր տերմինների ու մայրենի լեզվի բառերի նշանակությունը, օգտվել ոչ միայն վերոհիշյալ մասնագիտական, այլև բազմաթիվ թարգմանչական, տերմինաբանական, ուղղագրական, հոմանիշների, լեզվաբանական բառարաններից [10-19]:

Գոյություն ունեցող բավական հարուստ նյութերի մշակումն ու ամփոփումը արդի փուլում հնարավորություն են տալիս ստեղծելու հայկական երկրաբանական բավականաչափ լիարժեք բացատրական տերմինարան, որի բառացանկը արդեն կազմված է վերը նշված բառարանների, ինչպես նաև հեղինակների կողմից բազմաթիվ տարիների ընթացքում զրականությունից ու մամուլից հավաքած բառապաշարի հիման վրա:

Տերմինաբանում զետեղվելու են նաև մի շարք այլ գիտությունների (աշխարհագրություն, լեռնային գործ, քիմիա, կենսաբանություն) երկրաբանու-

թյան հետ առնչվող տերմինները: Դա զգալի չափով ընդլայնում է տերմինա-
րանի բառային ֆոնդը, այն դարձնում է ավելի ամբողջական ու համակոորմա-
նի, նրան տալիս է հանրագիտարանային բնույթ և ընդլայնում է ընթերցողնե-
րի շրջանակը:

Տերմինարանն ընդգրկելու է մոտ 6000 տերմին և բառակապակցություն,
այդ թվում՝ 100–150 հայերեն նոր տերմիններ: Դրանք գետեղվելու են այբբե-
նական կարգով. նախ տրվելու է ռուսերեն տերմինը, դիմացը՝ ստուգաբանու-
թյունը, հայերենի համարժեքը, անգլերեն անվանումը, այնուհետև իմաստա-
յին բացատրությունը և հոմանիշները: Բառարանի վերջում բերվելու են տեր-
մինների հայերեն և անգլերեն բառացանկերը: Ռուսերեն տերմինների դիմաց
մի շարք դեպքերում կտրվեն հայերեն մի քանի թարգմանություններ, եթե չկա
հայերեն լիարժեք համարժեքը և երբ այդ տերմինը տարբեր իմաստներ ունի
կամ կիրառվում է տարբեր քննազավառներում: Տերմինարանի հիմքում ընկած
է ռուսական տերմինների թարգմանությունը, սակայն հայերեն տերմինաշի-
նության գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել տերմինի ստուգա-
բանությանը, հաճախ ելնելով նրա լատինական կամ հունական ծագումից,
ինչպես նաև անգլերեն ձևից: Այսպիսի մոտեցումը մեծ չափով օգնում է
հայերեն համարժեք տերմինի ճիշտ թարգմանությամբ կամ ստեղծմանը:

Տերմինարանի կազմման հիմնական խնդիրներից մեկը միջազգային
տերմինների նույնությամբ ընդունելու, անպայման հայերեն թարգմանելու
կամ հայացնելու ճանապարհին ծայրահեղությունների մեջ չընկնելն է: Եթե
հայերեն թարգմանված կամ թարգմանվող տերմինը ճիշտ է արտահայտում
նրա իմաստը, ընդունված է կամ հեշտությամբ կընդունվի, դյուրին արտասա-
նելի է, համահունչ է հայոց լեզվին, լայնորեն օգտագործվում է կամ կարող է
հեշտությամբ օգտագործվել, ապա այդպիսի տերմինը անպայման պետք է
թարգմանվի, հակառակ պարագայում գերադասելի պետք է համարել միջազ-
գայինը: Այստեղ հնարավոր են հետևյալ տարբերակները:

1. Տերմիններ, որոնք ունեն միջազգային լայն ճանաչում ու կիրառու-
թյուն, բայց չունեն հայերեն համարժեքներ: Չնայած դրանք բառացի կարելի
է թարգմանել, բայց գերադասելի է թողնել միջազգայինը: Օրինակ, **Гранит**
(իտալ. *granito*, լատ. *granum*-ից – հատիկ) – բառացի կարելի է թարգմանել
հատաքար, բայց նպատակահարմար է թողնել միջազգայինը՝ գրանիտ, **Ба-
залът** (լատ. *basaltes*, հուն. *basanos*-ից – փորձաքար) – հայերեն գրվում սևա-
կուն, բայց ճիշտ է թողնել միջազգայինը՝ բազալտ, **Динозавр** (հուն. *deinos* –
անսովոր, սարսափելի և *sauros* – մողես) – դինոզավր (կարելի է՝ մեծամողես,
հրեշամողես), **Офиолиты** – օֆիոլիթներ (թարգմանություն չունի), **Фельзит**
(գերմ. *felsit*, անգլ. *Felspat* – դաշտասպաթ) – ֆելզիտ (հայերենը չունի) և այլն:

2. Որոշ տերմինների դեպքում ճիշտ կլինի զուգահեռաբար տալ ն՝ մի-
ջազգայինը, ն՝ հայերենը՝ ընտրությունը թողնելով ժամանակին: Օրինակ,
Кальцит (լատ. *calx*, սեռ. հոլով *calcis*–կիր) – կալցիտ, կրասպաթ, **Карбонат**
(լատ. *carbo*, սեռ. հոլով *carbonis*–ածուխ) – կարբոնատ, ածխատ, **Кварц**
(գերմ. *quarz*) – քվարց, որձաքար, **Лава** (իտալ. *lava*, լատ. *labes*-ից – փլուզում,
անկում) – լավա, հրահոսք, հրափրփուր, **Магма** (հուն. *magma* – խառնուրդ,
թանձր քունկ) – մագմա, հրահեղուկ, **Колчедан** – հրաքար, կոլչեդան, **Пирит**
(հուն. *pyrites lithos* – բառացի՝ հարվածով կրակ հանող քար) – պիրիտ,
ծծմրահրաքար, **Алевролит** (հուն. *aleuron* – ալյուր և *lithos* – քար) – ալկրո-

լիթ, արաբար, **Геосинклиналь** (հուն. ge – Երկիր և synklino – կռանում են) – գեոսինկլինալ, երկրասինկլինալ, **Антиклиналь** (հուն. anti – ընդդեմ, հակա-
ռակ և klino – կռանում են) – անտիկլինալ, կամարածալք, կորածալք, **Текто-
ника** (հուն. tectonikós – կառույց) – տեկտոնիկա, կառուցվածքաբանություն,
Перлит (ֆրան. perlite, perle-ից – մարգարիտ) – պեռլիտ, մարգարտաքար,
Оолит (հուն. oon – ձու և lithos քար) – օոլիթ, ձվաքար և այլն:

3. Միջազգային լայն կիրառություն ունեցող տերմիններ, որոնք ունեն
հայերեն համարժեքներ, անվերապահորեն պետք է թարգմանվեն, քանզի դը-
րանք կարող են հեշտությամբ օգտագործվել և լայն կիրառություն ստանալ:
Օրինակ, **Аквамарин** (լատ. aqua marina – ծովաջուր) – ծովակն, ծովաբյուրեղ,
Агломерат (լատ. agglomerо – կուտակում են, դիզում են) – շեղջաքար, **Ар-
гиллит** (հուն. árgillos – կավ և lithos) – կավաքար, **Брекчия** (իտալ. breccia –
ջարդեղ) – փշրաքար, **Биолиты** (հուն. bios – կյանք և lithos) – կենսաքար, **Ин-
трузив** (լատ. intrusus – ներմղված) – ներծայթուկ, **Литосфера** (հուն. lithos և
sphaira – գունդ) – քարոլորտ, **Нефть** (թուրք. nefit, պարսկ. – նեֆտ, անգլ. pet-
roleum, mineral oil) – քարյուղ, **Опал** (լատ. opalus, հուն. opállios, սանսկ.
ուպալա–քանկարժեք քար) – ծիածանաքար, արևակն, **Орогенез** (հուն. óros –
լեռ և genesis – ծագում) – լեռնագոյացում, **Оникс** (հուն. ónyx – եղունգ) –
եղնգ/ն/արար, **Стратиграфия** (լատ. stratum – փռվածք, շերտ, հուն. gráphō –
գրում են) – շերտագրություն, **Лагуна** (իտալ. laguna, լատ. lacus – լիճ) –
ծովալճակ և այլն:

4. Ռուսերեն տերմիններ, որոնք չեն թարգմանվում, բայց կարող են
հայացվել: Օրինակ, **Минералогия** – միներալաբանություն, **Магматизм** –
մագմայականություն և այլն:

5. Տերմիններ, որոնք ունեն լայն միջազգային կիրառում, ռուսականաց-
վել են և հայերեն գրվում են նույնակերպ՝ չունենալով հայերեն համարժեքը:
Օրինակ, լատիներեն **facies**, ռուսերեն **фация**, հայերեն **ֆացիա** և այլն:

6. Տերմիններ, որոնք չի կարելի ռուսերենից բառացի թարգմանել: Օրի-
նակ, լայնորեն օգտագործվող **Горная порода** տերմինը հաճախ թարգման-
վում է լեռնային ապար կամ լեռնապար: Առաջին դեպքում լեռնային բառը
ավելորդ է, իսկ երկրորդ դեպքում՝ կարելի է հասկանալ ոչ միայն լեռն/ապար
այլ նաև լեռնա/պար, հետևաբար պետք է թարգմանել ուղղակի ապար: **Мощ-
ность** տերմինը հաճախ բառացի թարգմանվում է հզորություն, որն անհաջող
է, այն պետք է թարգմանել հաստություն, որովհետև բնորոշում է շերտերի և
այլ երկրաբանական մարմինների հաստությունը: **Месторождение** տերմինը
երբեմն բառացի թարգմանվում է ծննդավայր, որը չի կարող ընդգրկել բոլոր
հանքակուտակները: Կան մի շարք հանքակուտակներ (նավթ, գազ, ոսկու
ցրոններ և այլն), որոնք այժմ տեղաբաշխված են իրենց ծննդավայրերից
տասնյակ կամ հարյուրավոր կիլոմետրեր հեռու, հետևաբար ճիշտ է այդ
տերմինը փոխարինել հանքավայր տերմինով: **Концентрат** տերմինը ավելի
ճիշտ է թարգմանել ոչ թե խտանյութ, այլ հարստանյութ, քանի որ այդ
տերմինի տակ հասկացվում է ոչ թե հանքանյութի խտությունը այլ հարստու-
թյունը: **Грунт** տերմինը հայերենում հաճախ նույնակերպ փոխառնվում է,
նպատակահարմար է այն թարգմանել բնահող կամ գետին:

7. Տերմիններ, որոնք ունեն հայերեն մի քանի համարժեքներ և երբեմն
տարբեր իմաստներ: Այդ դեպքում տերմինարանում առաջինը պետք է նշվի

առավել կիրառելի և ընդունելի քարզամությունը: Օրինակ, **Мантия Земли** (միջին հուն. mantion – ծածկոց, քիկնոց) – Երկրի միջնապատյան, Ե. միջնություն, Ե. քիկնոց, միջակա երկրապատյան, ենթակեղևաշերտ: **Опробование** – մնուշահանում, մնուշարկում, մնուշառում: **Регион** – երկրաշրջան, ռեգիոն: **Самоцвет** – բնագունեղ քար, բնագույն քար, փայլաքար: **Толща** – ստվարաշերտ, հաստվածք, ապարախումբ և այլն:

8. Տերմիններ, որոնց անվանումը ճշտման կարիք է գզում: Օրինակ, Երկրի հնագույն խոշոր ծովային ավազանի անվանումը գրականության մեջ գրվում է **Թետիս**, **Տետիս**, **Տեթիս** և **Թեթիս**, ընդունվում է **Տեթիսը**, չշփոթելու համար Աքիլլեսի մայր՝ Թետիսի հետ: Ռուսերեն **лит-ով** վերջացող բազմաթիվ տերմիններում մերթ գրում ենք տ, մերթ՝ ք: Եթե այդ վերջավորությունը առաջանում է հուն. lithos – քար բառից, ապա հայերենում **ե**-ն տառադարձվում է **թ**-ի և գրվում է լիթ:

Երկրաբանության մեջ շատ է օգտագործվում **Минералогия** տերմինը: Այն ծագում է ֆրանս. mineral, ուշ լատ. minera-ից – հանքանյութ, հանքաքար: Սկզբնապես, երբ միներալները փոքրաքանակ էին, իսկապես հանքանյութ էին: Հետագայում միներալների քանակը շատացավ, հայտնաբերվեցին բազմաթիվ նոր միներալներ, որոնք ոչ միայն հանքանյութ էին, այլև ապարի բաղադրամասեր: XIX դարի սկզբում հայտնի էին մոտ հարյուր միներալ, այժմ՝ մոտ 3000, որոնցից տեխնիկայում և արտադրության մեջ օգտագործվում են մոտ 400-ը: Այսինքն, հանքանյութ հանդիսանում է հայտնի միներալների մոտ 15%-ը, իսկ մնացած 85%-ը՝ ապարների բաղադրամասեր կամ բնական գոյացություններ են: Ուրեմն հանքաբանություն տերմինը, որը քարզամանվում է **минералогия**-ից, չի համապատասխանում այդ տերմինի իմաստին: Ուստի հայերենում ավելի ընդունելի է միներալաբանություն տերմինը:

Իր տեսակի մեջ լինելով առաջինը՝ տերմինարանը, բնականաբար, գուրկ չի լինի թերություններից, ուստի սույն հոդվածը նպատակ ունի մասնագետների քննարկմանը ներկայացնել տերմինարանի հիմնահարցերը, ստանալ նրանց դիտողություններն ու առաջարկները: Դա կնպաստի տերմինարանի կազմման աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպմանը և թերությունների նվազեցմանը:

Պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոն

Ստացվել է 11.02.2002

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեմյան Ս. Նոր հանքաբանություն, նկարագրական և պատմական. Վենետիկ, 1900:
2. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր., 1957:
3. Սարգսյան Հ.Հ. Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարան, Երևանի համալսարանի հրատ., 1984:
4. Խաչատրյան Գ.Ա. Լեռնատեխնիկական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարան, Եր.: Հայաստանի հրատ., 1985:
5. Հայկական սովետական հանրագիտարան (12 հատորով), Եր., 1974–1987:
6. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր.: ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
7. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, կազմող և խմբագիր Հ. Բարսեղյան, Երևանի համալսարանի հրատ., 1984:
8. Ավետիսյան Վ.Ա., Բոշնադյան Պ.Ս., Դավթյան Դ.Ե. Ջրաերկրաբանական և իմժեներաերկրաբանական ռուս-հայերեն բացատրական բառարան, Եր.: Գիտություն հրատ., 1995:

9. Սարգսյան Հ.Հ. Հայաստանի ռեգիոնալ երկրաբանություն, Երևանի համալսարանի հրատ., 1989:
10. Геологический словарь, т. I-II, М.: Недра, 1978.
11. Горная энциклопедия, т. 1-5, М.: Изд-во Сов. энциклопедия, 1984-1989.
12. Четырехязычный энциклопедический словарь терминов по физической географии, М.: Изд-во Сов. энциклопедия, 1980.
13. Англо-русский геологический словарь, составила Т.А. Софриано, М.: Изд-во Физмат, 1961.
14. Բարսեղյան Հ.Խ. Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր.: Լույս հրատ., 1973:
15. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (4 հատորով), Եր.: ՀՍԽՀ ԳԱ հրատ., 1969-1980:
16. Սուրիաչյան Ա.Մ. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր.: ՀՍԽՀ ԳԱ հրատ., 1967:
17. Ղարիբյան Ա.Խ. Ռուս-հայերեն բառարան, Եր.: Հայաստան հրատ., 1982:
18. Հայ-ռուսերեն բառարան, Եր.: ՀՍԽՀ ԳԱ հրատ., 1984:
19. Русско-английский разговорник для геологов, М.: Изд-во Русский язык, 1990.

Օ.Ա. ՏԱՐԿԻՍՅԱՆ, Ր.Օ. ՏԱՐԿԻՍՅԱՆ

ОСНОВНЫЕ ПОЛОЖЕНИЯ СОЗДАНИЯ АРМЯНСКОГО ГЕОЛОГИЧЕСКОГО ТЕРМИНОЛОГИЧЕСКОГО СЛОВАРЯ

Резюме

Сотрудники кафедры исторической и региональной геологии ЕГУ приступили к составлению первого армянского энциклопедического словаря геологических терминов (около 6000 терминов). Учитывая важность проблемы, в статье излагаются те исходные положения, которые разработаны авторами и будут учтены при составлении словаря.

H.H. SARGSIAN, R.H. SARGSIAN

THE BASIC PRINCIPLES OF ARMENIAN GEOLOGICAL DICTIONARY

Summary

The scientific workers of historical and regional geology Department of Yerevan State University started working on the first Armenian Enciclopedia Dictionary of geological terms (about 6000 terms).

Taking into account the importance of the problem in the item are written those basic principles, which are created by authors and will be used in compilation of the dictionary.